

Ա-42

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՀՄԱԳ ԱՐԴԵԼԿԱԳԻՐ ՋԱՐՈՒՇԵՀ

ՄԵՆ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ  
ԵՎ ԱՐԱՔՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Է.00.02 “ՀԱՄԱՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ”

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար  
ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

54-21

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ  
Ն.Հ. Հովհաննիսյան


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր  
Ա.Գ. Ավագյան  
պատմական գիտությունների թեկնածու  
Ա.Ա. Մելքոնյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. նոյեմբերի 15-ին, ժ. 14.00-ին ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում  
(Հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ., 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գրադարանում:

Ատենախոսությունն առաքված է 2007թ. հոկտեմբերի 12-ին

Մասնագիտական խորհրդի  
գիտնական քարտուղար  
պատմական գիտությունների դոկտոր  Պ.Ա.Չոբանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, սառը պատերազմի ավարտից և  
Խորհրդային Միության լուծարումից հետո, նոր իրադրություն ստեղծվեց միջազգային  
հարաբերություններում: ԱՄՆ-ը դարձավ միակ գերտերությունը և երկբևեռ աշխարհին  
փոխարինելու եկավ միաբևեռ աշխարհը: Այդ նոր իրադրությանը համապատասխան,  
ԱՄՆ-ի կառավարությունը մշակեց նոր ստրատեգիա՝ ելնելով իր միջազգային դիրքերն  
ամրապնդելու և աշխարհի տարբեր մասերի վրա իր վերահսկողությունը հաստատելու  
խնդիրներից:

ԱՄՆ-ի կառավարությունն իր այդ նոր “պատմական առաքելության”  
շրջանակներում որդեգրեց նոր քաղաքականություն նաև Մերձավոր Արևելքում:  
Պրեզիդենտ Ջորջ Բուշ կրտսերը հռչակեց “Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծը”, որը  
պաշտոնապես ներկայացվեց 2004թ. հունիսի 8-ին Մեծ ութնյակի (G-8)  
զագաթաժողովին<sup>1</sup>: Նա ավանդական “Մերձավոր Արևելքի” փոխարեն առաջարկեց “Մեծ  
Մերձավոր Արևելք” (ՄՄԱ) եզրը, որն ըստ նրա սահմանման ընդգրկում է մի հսկայածավալ  
տարածք՝ Մարոկկոյից և Մավրիտանիայից՝ Հյուսիսային Աֆրիկայում, մինչև  
Աֆղանստան և Պակիստան՝ Կենտրոնական Ասիայում: Նրա մեջ մտնում են Ասիայի և  
Աֆրիկայի բոլոր արաբական երկրները, Իրանը, Թուրքիան, Իսրայելը, Աֆղանստանը և  
Պակիստանը:

ԱՄՆ-ը 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական դեպքերը պատրվակ դարձրեց  
փոխելու միջազգային հարաբերությունների գոյություն ունեցող արժեքային համակարգը  
և կյանքի կոչեց նոր նախագծեր և ծրագրեր: Հենց այդ նոր ծրագրերից մեկն էլ ՄՄԱ  
Նախագիծն էր: Նրա նպատակը հռչակվեց նախագծի մեջ ընդգրկված երկրներում  
բարեփոխումների իրականացումը, ելնելով այն տեսադրույթից, որ ահաբեկչության  
տարածման պատճառը Մերձավոր Արևելքում դեմոկրատիայի բացակայությունն է  
արաբական և իսլամական հասարակություններում և նրանց հետամնացությունը:  
Պրեզիդենտ Բուշը ՄՄԱ-ի առաջադրումով ձգտում է տեռորիզմի դեմ պայքարի բողո  
տակ հաստատել ԱՄՆ-ի հեգեմոնիան ու վերահսկողությունն աշխարհի վրա և  
ամրապնդել ԱՄՆ-ի՝ որպես միաբևեռ կենտրոնի դիրքերը մեր մոլորակի բոլոր  
կենսականոթեն կարևոր մասերում:

Նախագիծը հիմնված է Մեծ Մերձավոր Արևելքի մեջ խմբավորված Ասիայի և  
Աֆրիկայի երկուասնյակից ավելի մուսուլմանական երկրներում քաղաքական,

<sup>1</sup> Մեծ Ութնյակի՝ G-8-ի մեջ մտնում են աշխարհի ութ տնտեսապես ամենահզոր երկրները՝  
Անգլիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Իտալիան, Կանադան, Ճապոնիան, Ռուսաստանը և Ֆրանսիան:



տնտեսական, սոցիալական և մշակութային վերակառուցումներ իրականացնելու գաղափարի վրա: Սակայն Մեծ Մերձավոր Արևելքի վերակառուցումը պետք է իրականացվի արևմտյան արժեքների հիման վրա: Իսկ դա նշանակում է, որ արաբական և մյուս մուսուլմանական երկրները պետք է հրաժարվեն իրենց սեփական քաղաքական, տնտեսական, հոգևոր և մշակութային արժեքներից, ընդունելով Արևմտյան՝ այսինքն օտար արժեքները:

Այս օտար նախագիծը պարտադրվում է տարածաշրջանին՝ առանց հաշվի առնելու նրա հասարակական կարծիքը և տեղական ժողովուրդների կրոնական, մշակութային, լեզվական առանձնահատկությունները և պատմական ձեռքբերումները, ձգտելով լուսանցքային դարձնել այդ բոլորը նվաճումները, և Իսրայելը մտցնել տարածաշրջանի արաբական կառույցներում:

Ամերիկյան Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը ցնցեց ամբողջ արաբական և մուսուլմանական աշխարհը և առաջ բերեց դժգոհության և բողոքի հուժկու ալիք: Այդ երկրները և նրա ժողովուրդները Բուշի նախաձեռնությունն ընկալեցին ամերիկյան հեգեմոնիան այս ընդարձակ տարածքի վրա հաստատելու մի փորձ: Նրանք համարում են «Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծը = Pax Americana»:

Դրա հետ միասին արաբական երկրներում ժողովրդական ամենալայն զանգվածները, քաղաքական, կուսակցական և հասարակական տարբեր ուժերն ընդունում են, որ նրանց տարածաշրջանը, արաբական երկրները, իսկապես կարիք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթամշակութային բարեփոխումների և վերակառուցումների: Բայց նրանք դեմ են, որ այդ բարեփոխումները դրսից պարտադրվեն, գտնելով, որ դրանք պետք է մշակվեն ներսում և կիրառվեն ներսից՝ առանց օտարերկրյա միջամտության:

Միաժամանակ արաբները և բոլոր մուսուլմանական երկրներն ու ժողովուրդները կտրուկ կերպով դեմ են ամերիկյան փորձերին Մերձավոր Արևելքը դիտել միջազգային ահաբեկչության կենտրոն և այն նույնացնել իսլամի, արաբների և մուսուլմանական մյուս ժողովուրդների հետ:

Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը, նկատի ունենալով նրա ստրատեգիական, քաղաքական, տնտեսական, ֆինանսական բացառիկ նշանակությունը, շոշափում է նաև Եվրոպայի, ՆԱՏՕ-ի, Ռուսաստանի, Չինաստանի, ամբողջ Եվրասիայի տարածաշրջանի շահերը: Բուշի նախաձեռնությունը լուրջ մարտահրավեր է նաև նրանց:

Այդ բոլորը վկայում է քննարկման առարկա հանդիսացող բեմայի արդիականության և հրատապ լինելու, նրա գիտական ու քաղաքական կարևորության մասին: Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հիմնավոր քննարկումը և տեսադրույթների վերլուծությունը հույժ կարևոր գիտական խնդիր է:

## 2. ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է համակողմանի ուսումնասիրել բեմայի առանցքային հարցերը, Մեծ Մերձավոր Արևելքի ծրագրի առաջադրման գլխավոր պատճառները, նրա մարտահրավերները, արաբական աշխարհի և մուսուլմանական երկրների ռեակցիան այդ նախագծին, արաբական տարբերի ուժերի դիրքորոշումն ամերիկյան պրեզիդենտի առաջարկության նկատմամբ և նրա իրականացման հետևանքները: Այսպիսով՝ ի մի բերելով, կարելի է ասել, որ սույն ատենախոսության հիմնական նպատակներն են.

Առաջին, բացահայտել Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի պատմական հիմքերը, երկրորդ, լույս սփռել ԱՄՆ-ի իսկական նպատակների վրա, որոնք հանգեցրին Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի լույս աշխարհ գալուն, և, երրորդ, բացահայտել նախագծի նկատմամբ տարածաշրջանի երկրների դիրքորոշումը:

Հեղինակը փորձել է այդ նպատակներին հասնել՝ իր առջև դնելով հետևյալ խնդիրները.

- Քննել 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակման ազդեցությունը մերձավորարևելյան տարածաշրջանում՝ ԱՄՆ-ի քաղաքականության վերածևավորման, ահաբեկչության դեմ պատերազմի և ահաբեկչության ու իսլամի միջև խառնաշփոթ ստեղծելու տեսանկյունից:
- Բացահայտել Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի լույս աշխարհ գալու և այն տարածաշրջանի երկրներին պարտադրելու պատճառներն ու խնդիրները, ամերիկյան առաջարկվող ռեֆորմների վտանգավորությունը արաբական ինքնությանը:
- Ուսումնասիրել Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի առանցքային հիմնախնդիրները՝ մասնավորապես դեմոկրատիային և լավ կառավարմանն աջակցելու, գիտության վրա հիմնված հասարակության կառուցման և տնտեսական հնարավորությունների ընդլայնման հարցերը և ամերիկյան մոտեցումները:
- Բացահայտել Բուշի և նրա կառավարության ձգտումը՝ ամրապնդել ԱՄՆ-ի հեգեմոնիան Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում՝ Մարոկկոյից մինչև Աֆղանստան և Պակիստան, և նրանց զարգացումը տանել այնպիսի ուղիով, որն առավել է համապատասխանում ԱՄՆ-ի ստրատեգիական և տնտեսական շահերին:
- Լուսաբանել տարածաշրջանի երկրների՝ առաջին հերթին արաբական երկրների, Արաբական պետությունների լիգայի, ինչպես նաև Թուրքիայի, Իրանի, Իսրայելի, Եվրասիայի և ՆԱՏՕ-ի դիրքորոշումը ՍՄԱՆ-ի նկատմամբ:
- Լուսաբանել արաբական երկրների կողմից Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի մերժման և նրան մարտահրավերներ նետելու քաղաքական, ռազմական, կրոնական, մտավոր և մշակութային գործոնները:



- Ներկայացնել ՄՄԱՆ-ի հավանական այլընտրանքները:
- Նշել արաբական երկրների ղեկավարության պատասխանատվությունը արաբական երկրներում համապատասխան քաղաքական, սոցիալական, տնտեսական և կրթամշակութային ռեֆորմներ իրականացնելու վերաբերյալ արաբական նախագծերի բացակայության հարցում:
- Քննարկել Մերձավոր Արևելքի ապագա հեռանկարների հարցերը և այդ համատեքստում նաև Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի ապագան:

### 3. ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մույն ատենախոսությունն առաջին փորձն է ինչպես սիրիական, այնպես էլ արաբական, և, որքան մեզ հայտնի է նաև հայ պատմագիտության մեջ, համակողմանիորեն ուսումնասիրելու Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի տարբեր ասպեկտները, արաբական երկրների ազգային շահերին սպառնացող մարտահրավերները, արաբների, ինչպես նաև երեք այլ գլխավոր դերակատարների՝ Թուրքիայի, Իրանի և Իսրայելի դիրքորոշումը ՄՄԱՆ-ի հարցում:

Աշխատության գիտական նորությունը կապված է նաև Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի բովանդակության, նպատակների և հետևանքների բացահայտման, նրա իրականացման մեթոդների և ուղիների վերլուծության, այդ ծրագրի հավանական այլընտրանքի, նրա ապագայի հարցի հետ, լայնորեն օգտագործելով տարբերությամբ պաշտոնական փաստաթղթեր, նյութեր և գրականություն արաբերեն և անգլերեն լեզուներով, որոնց ճնշող մեծամասնությունն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում: Դրանք մեզ մատչելի են եղել Դամասկոսի, Հալեբի, Լոնդոնի, Օքսֆորդի, Բեյրութի և Դուբայի գրապահոցներում:

### 4. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 2004 թվականից, երբ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջուջ Բուշը նախաձեռնեց և պաշտոնապես հռչակեց Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը, մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը: ՄՄԱՆ-ի իրականացումը դեռևս գործընթացի մեջ է:

Միաժամանակ հաշվի առնելով, որ Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծն օրգանապես կապված է XX դարի 90-ական թվականներին Մերձավոր Արևելքի վերաբերյալ արևմտյան և ամերիկյան նախորդ նախագծերի և ծրագրերի հետ, հարկ ենք համարել ընդարձակել ուսումնասիրության ժամանակագրական սահմանները՝ անդրադառնալով նաև այդ ծրագրերից գլխավորներին:

### 5. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը կազմում է Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հիմնախնդիրների քննական մեկնաբանությունը, օգտագործելով վերլուծական և համեմատական սկզբունքը՝ փաստերի և դեպքերի գնահատման մեջ: Իր արժանի տեղն է գտել նաև պատմահամեմատական, պատմավերլուծական և միջդիսցիպլինար հետազոտության մեթոդի կիրառումը, որն ապահովում է քննարկվող առանցքային հիմնախնդիրների ամբողջական և խորքային ուսումնասիրությունը, դեպքերի և իրադարձությունների տրամաբանական շղթայական կապը:

### 6. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատության հիմնարար սկզբունքները և եզրակացությունները կարող են օգտագործվել տարբեր բնագավառներում, ի մասնավորին՝ ա/ Մերձավոր Արևելքի, գլխավորապես արաբական երկրների, Իրանի, Թուրքիայի և Իսրայելի պատմությանն ու քաղաքականությանը, միջազգային հարաբերությունների արդիական հիմնախնդիրներին մվիրված ուսումնասիրություններում, արաբական և հարևան երկրների համապատասխան պետական մարմինների և հետազոտական կենտրոնների համար վերլուծական նյութերի պատրաստման գործում: Ատենախոսության գիտական արդյունքները կարող են օգտակար լինել նաև անկախ Հայաստանի Հանրապետության համար, քանի որ Հայաստանը պատմականորեն և աշխարհագրականորեն պատկանում է մերձավորարևելյան տարածաշրջանին, որտեղ կատարվող քաղաքական ու ստրատեգիական փոփոխությունները կարող են անդրադառնալ նրա դրության վրա: Արդյունքները կարող են օգտագործվել համալսարաններում, ինստիտուտներում և նման ուսումնական կենտրոններում ուսանողների, ասպիրանտների և մասնագետների համար դասագրքեր և դասընթացներ պատրաստելու համար:

### 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից: Աշխատության սկզբունքները և կառուցվածքը քննարկվել և հավանության են արժանացել նույն ինստիտուտի կողմից, որտեղ ատենախոսը մշտապես խորհուրդներ է ստացել:

Ատենախոսությունը քննարկվել է Դամասկոսի համալսարանի Միջազգային իրավունքի ֆակուլտետում, արժանացել հավանության և երաշխավորվել պաշտպանության: Աշխատության առանձին դրույթներ ներկայացվել են Միդիայում և արաբական այլ երկրներում գումարված զանազան ֆորումներին: Աշխատության



հիմնադրույթները և եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակած աշխատություններում:

#### 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Առենախոսությունը գրված է հիմնականում արաբերեն և անգլերեն լեզուներով տարբեր աղբյուրների և գրականության հիման վրա: Մակայն սույն աշխատության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նա հնարավոր է ներկայացնել որպես լիարժեք գիտական ուսումնասիրություն միայն բավարար քանակությամբ սկզբնաղբյուրների՝ առաջին հերթին պաշտոնական փաստաթղթերի և նյութերի առկայության դեպքում, և, բարեբախտաբար, ատենախոսի ձեռքի տակ եղել են նման մեծաքանակ փաստաթղթեր և նյութեր:

Առաջին հերթին պետք է նշել տարաբնույթ ամերիկյան պաշտոնական փաստաթղթերը և նյութերը, որոնք վերաբերում են Մեծ Մերձավոր Արևելքի նախագծին և պաշտոնական այլ փաստաթղթերի հետ միասին, կազմում են սույն ատենախոսության առանցքն ու աղբյուրագիտական հիմքը: Դրանց շարքում իր նշանակությամբ ամենաարժեքավորը և կարևորը “Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծը” պաշտոնական փաստաթղթի ամբողջական տեքստն է<sup>2</sup>: Դա հնարավորություն է տվել հեղինակին մանրամասնորեն քննարկել Նախագծի բովանդակությունը, նրա խնդիրները և վերջնական նպատակները, և ցույց տալ, որ ամերիկյան այդ նախագիծը հետապնդում է ամբողջ մերձավորարևելյան ռեգիոնը վերակառուցելու և նրա վրա ԱՄՆ-ի հեգեմոնիան հաստատելու նպատակներ:

Մի շարք այլ ամերիկյան փաստաթղթեր և նյութեր գալիս են լրացնելու վերոնշյալ հիմնական փաստաթուղթը և լույս սփռում նրա առանձին դրույթների, նպատակների և սկզբունքների վրա: Դրանց մեջ հարկ է նշել պրեզիդենտի Բուշի պրես կոնֆերանսներն ի պաշտպանություն սեփական նախաձեռնության<sup>3</sup>, նրա զեկուցումը Ստամբուլի Գալատարայի համալսարանում<sup>4</sup> և այլն: Տիպարանորեն այդ կատեգորիային են պատկանում նաև մի շարք այլ ամերիկյան փաստաթղթեր և նյութեր<sup>5</sup>:

Ուշագրավ են նաև ՄԱԿ-ի որոշ նյութեր, ինչպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի խոսնակի տեսակետը Մերձավոր Արևելքում ձևավորվող նոր իրողությունների առնչությամբ<sup>6</sup>:

Կարևորագույն պաշտոնական փաստաթղթերի և նյութերի մյուս խումբը կազմում են արաբական, իրանական, թուրքական և իսրայելական փաստաթղթերը, որոնք անգնահատելի տեղեկություն են պարունակում Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նկատմամբ արաբական երկրների, Իրանի, Թուրքիայի և Իսրայելի պաշտոնական դիրքորոշումների վերաբերյալ:

Արաբական փաստաթղթերը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը կազմում են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են արաբների հավաքական դիրքորոշմանը: Դրանց մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են Արաբական պետությունների ղեկավարների 2004թ. մայիսին Թունիսում կայացած զագաթաժողովի համատեղ հայտարարությունը<sup>7</sup>, արաբական երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպման նյութերը<sup>8</sup>, Ալեքսանդրիայի ղեկավարացիան<sup>9</sup> և այլն: Ինչպես վկայում են այդ փաստաթղթերը, արաբական երկրները մերժում են ռեֆորմները դրսից պարտադրելու ամերիկյան քաղաքականությունը, խիստ քննադատում ահաբեկչությունը իսլամի և արաբների հետ նույնացնելու ԱՄՆ-ի փորձերը և կարևորում արաբների էթնիկական և մշակութային ինքնության պահպանումը:

Արաբական փաստաթղթերի երկրորդ խումբը կազմում են ՄԱՆ-ի նկատմամբ արաբական առանձին երկրների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Լիբանանի, Հորդանանի, Եմենի, Մարոկկոյի, Ալժիրի, Թունիսի և արաբական մյուս երկրների դիրքորոշմանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը: Դրանց մեջ հատկապես պետք է ընդգծել Եգիպտոսին վերաբերող փաստաթղթերը, որոնք վկայում են, որ Եգիպտոսը և նրա պրեզիդենտ Մուբարակը վճռական դեր խաղացին ՄՄԱՆ-ի դեմ ժխտական դիրք գրավելու հարցում և գլխավորեցին արաբների շարժումը՝ ուղղված ԱՄՆ-ի պրեզիդենտի նախաձեռնության դեմ<sup>10</sup>: Այդ հարցում Եգիպտոսը և Սաուդյան Արաբիան հաճախ գործում էին համատեղ, որի մասին է վկայում Եգիպտոս-սաուդյան

<sup>2</sup> Greater Middle East Partnership. Full Text, “Al-Hayat”, London, February 13, 2004.

<sup>3</sup> The White House. President Bush Hold Press Conference Following the G-8 Summit, June 2004, <http://www.whitehouse.gov>

<sup>4</sup> Bush Says Democracy Will Bring Justice, Freedom, Prosperity. President Speaks at Galatasaray University in Istanbul, June 29, 2004, Press Releases, Speeches and Statements, <http://www.usembassy-china.org.cn>

<sup>5</sup> Stu’ White House. Sea Island Summit, 2004, <http://www.whitehouse.gov/g8/2004/>; Statement by the Press Secretary of White House on the Greater Middle East and Summit G-8, <http://www.whitehouse.gov>; Assistant US Secretary of State William Burns: How Can The Transatlantic Community Help Build Peace, Prosperity and Security in the Greater Middle East, <http://www.infomideast.com>; The White House. News and Policies. US-Middle East Free Trade Area (MEFTA). Fact Sheet, <http://www.whitehouse.gov>; The White House. News and

Policies. Middle East/N. Africa Fact Sheet: Broader Middle East and North Africa Initiative, June 2004, <http://whitehouse.gov>;

<sup>6</sup> Middle East Peace Process Initiatives. Daily Press Briefing by the Office of the Spokesmen for the UN Secretary-General, <http://www.reliefweb.int/rw/Open Document>

<sup>7</sup> The Final Communique of the Arab Summit Held on the May 22-23, 2004, in Tunis, Criticizes the American Policy in the Middle East, Ain al-Yaqin, May 28, 2004.

<sup>8</sup> Arab Foreign Ministers Four-Day Meeting. Arab Split Over Greater Middle East, Turks.US Daily News, March 1, 2004.

<sup>9</sup> Alexandria Declaration, “Al-Hayat”, London, April 7, 2004.

<sup>10</sup> Stu’ Mubarak Voices Opposition to the American Greater Middle East, Iran Press Service, March, 2004; Cairo Mistrusts Bush’s Greater Middle East Initiative. Mubarak Turns Down Invitation to G-8 Summit, Unhappy About Washington’s Design For Region, Middle East Online, May 24, 2004



համատեղ հայտարարությունը<sup>11</sup>: Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի դեմ վճռական դիրք գրավեց Սիրիան<sup>12</sup>: Սիրիայի բացասական դիրքորոշումը բազմիցս հաստատվեց նրա բարձրագույն ղեկավարության՝ պրեզիդենտ Բաշար Ասադի, փոխ պրեզիդենտ Մաշարբայի, արտաքին գործերի նախարարի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Ժխտական դիրք գրավեցին նաև Լիբանանը<sup>13</sup> և արաբական այլ երկրներ:

Հեղինակի տրամադրության տակ են եղել նաև մի շարք փաստաթղթեր, որոնք շատ կարևոր են Իրանի դիրքորոշումը ճիշտ հասկանալու և մեկնաբանելու տեսակետից: Դրանք Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի, պաշտամենտի՝ Մեջլիսի նախագահի, պաշտպանության նախարարի հայտարարություններն են և այլ նյութեր<sup>14</sup>, որոնք վկայում են, որ Իրանը հենց սկզբից ընդգծված բացասական դիրք էր գրավել ամերիկյան այդ նախաձեռնության դեմ, գտնելով, որ դա սպառնալիք է Իրանին, իսլամին և իսլամական աշխարհին:

Իրենց նշանակությամբ խիստ կարևոր են նաև բուրբական փաստաթղթերը, քանի որ ԱՄՆ-ն առանձնահատուկ տեղ է հատկացնում Թուրքիային Մեծ Մերձավոր Արևելքի նախաձեռնության կենսագործման հարցում, նրան դիտելով որպես մոդել մուսուլմանական աշխարհի մյուս երկրների համար: Այդ փաստաթղթերից կարևոր են Թուրքիայի պրեզիդենտ Սեզերի և վարչապետի՝ Ռեջեպ Թայյիբ Էրդոգանի տեսակետներն ու մտտեցումներն արտահայտող նյութերը՝ նրանց պաշտոնական հայտարարությունները, գանազան լսարանների առջև ունեցած ելույթները, և այլն<sup>15</sup>:

Ինչ վերաբերում է իսրայելական փաստաթղթերին, ապա դրանք վկայում են այն մասին, որ Իսրայելն ամբողջությամբ հավանություն է տալիս Մեծ Մերձավոր Արևելքի ծրագրին՝ հետապնդելով իր սեփական քաղաքական և ստրատեգիական նպատակները՝

<sup>11</sup> Common Egyptian-Saudi Communique on Greater Middle East Initiative , Al-Hayat", London, February 19, 2004.

<sup>12</sup> Vice-President Highlights Syria's Policy Towards Greater Middle East Initiative, Syria-USA Politics, Damascus, March 19, 2004; Al-Sharaa [ Syrian Foreign Minister] Al-Faisal [Foreign Minister of Saudi Arabia] Discussed the Middle East Issues, Syria-Saudi Arabia, Politics, Damascus, March 11, 2004; Mohsen Bilal: US Greater Middle East Dream Doomed, "Tishreen", Damascus, October 29, 2006.

<sup>13</sup> Lebanese President Lahoud: Democratic Choice Cannot Be Imposed From Outside, Middle East Online, March 24, 2004.

<sup>14</sup> Iran's Khamenei Calls For Resistance to US Plan on Middle East, Iran Focus, July 4, 2007; Majlis Speaker: Imposition of Sanctions on Iran in Line with US Greater Middle East Plan, <http://www2.irna/en/news>; Rear Admiral Ali Shamkhani, Iranian Defense Minister: US Greater Middle East Initiative Meant to Combat Islam, "Al-Sharq", Doha, February 28, 2005.

<sup>15</sup> Turkish President: Democracy and Religion State Are Not Compatible [President Ahmet Necdet on the Greater Middle East Initiative], <http://www.aina.org/news/20041002.htm>; Democracy in the Middle East , Pluralism in Europe: Turkish View Address by H.E Recep Tayyip Erdogan, Prime Minister of Turkey, Harvard University, Kennedy School of Government, January 30, 2003, <http://216.109.125.130/search/cache?> Erdogan: Turkey Will Voice Its Views About Middle East at G-8 Summit, Turkish Industrialists' and Businessmen's Association US Representative Office, Turkey News, May 25-31, 2004; Opinion, The Greater Middle East Project, Turkish Daily News, March 2, 2004.

մասնավորապես դուրս գալ մեկուսացումից և անրապնդել իր քաղաքական և տնտեսական գերակայող դիրքերը տարածաշրջանում<sup>16</sup>:

Մենք օգտագործել ենք նաև որոշ փաստաթղթեր, որոնք վերաբերում են Եվրամիության և ՆԱՏՕ-ի դիրքորոշումներին ՄԱՆ-ի նկատմամբ և տարակարծություններին ԱՄՆ-ի և այդ կառույցների միջև<sup>17</sup>:

Ատենախոսի առջև կանգնած խնդիրների լուծմանը և առանցքային հարցերի լուսաբանությանը նշանակալիորեն օգնել են արաբ և արևմտյան հեղինակների աշխատությունները, ինչպես մեծագրական ուսումնասիրությունները, որոնք այնքան էլ շատ չեն, այնպես էլ հոդվածները:

Արաբական հեղինակներից ուշադրության են արժանի Աբդ ալ-Կադիր ալ Մադադի, Դազի ալ-Հուսեյնի, Աբդ Ալլահ ալ-Հասանի, Աբի ֆ ալ Դամրի, Մուհամմադ Հասանեյն Հայկալի, Մուհամմադ ալ- Հուտի, Մաջիդ Շարուդի, Աբդ ալ-Գաֆար Շաբերի,, Մուհամմադ Գալադարի և այլոց արաբերեն լեզվով աշխատությունները<sup>18</sup>: Նրանք պարունակում են հետաքրքրի նյութ Մեծ Մերձավոր Արևելքի ծրագրի, ԱՄՆ-ի քաղաքականության և տարածաշրջանի հիմնախնդիրների վերաբերյալ:

Արևմտյան հեղինակների աշխատություններից պետք է առանձնացնել այն ուսումնասիրությունները, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական իրողությունների, մերձավորարևելյան ճգնաժամի, ահաբեկչության և Մերձավոր Արևելքում անհրաժեշտ ռեֆորմներ իրականացնելու հարցերի հետ: Այդ աշխատությունների շարքում իրենց կարևորությամբ պետք է նշել Ջեիզն Բեթեմիսկու, Մարտին Ջիլբերտի, Վիլյամ Քվանդտի գրքերը<sup>19</sup>, ինչպես նաև ամերիկյան հեղինակ Ջորջ Լենցովսկու փաստաթղթերով հարուստ աշխատությունը, որտեղ քննարկվում են ԱՄՆ-ի ութ պրեզիդենտների քաղաքականությունը Մերձավոր Արևելքում<sup>20</sup>: Ուշագրավ են Ն. Հովհաննիսյանի աշխատություններն Անդրկովկասյան-

<sup>16</sup> Shu'Ve Have the Future , Maarif", Tel Aviv, July 11, 2005.

<sup>17</sup> US Department of State. International Information Programs. Greater Middle East Initiative:Essential Reforms Cannot Be Imposed , <http://www.global security.org/military/library /news ;> Europe Faces Four Policy Challenges in Greater Middle East, <http://www. infomideast.com>

<sup>18</sup> Abd al-Kadir Rouzeque al-Maghadmi, The Greater Middle East Project. Realities and Goals, Algeria, 2005; Ghazi al-Hussein, The Greater Middle East Project: Between International Zionism and Imperialism, Damascus, 2005; Abd Allah al-Hasan, The Ideology of the New Colonial Project, Damascus, 2004; Atef al-Ghamri, The Greater Middle East, Cairo, 2004; Muhammad Dasanein Haikal, The American Empire and Raid on Iraq, Cairo, 2004; Muhammad Ali Hout, Middle East Concept and its Effects on Arab National Security, Cairo, 2002; Majed Shadoub, Middle Eastern System, Damascus, 1996; Abd al-Ghaffar Shaker , The Zionist Project Challenges and the Arab Confrontation, Cairo, 2001; Muhammad Galadari, Arab Presence at G-8 Summit, "The Khaleej Times", May 25, 2004.

<sup>19</sup> Zbignew Brzezinski, The Grand Chessboard: Ameican Primacy and the Geostrategic Imperatives, New York, 1997; Martin Gilbert, Atlas of the Arab-Israeli Conflict. The Complete History of the Struggle and Efforts to Resolve It, London, 1993; William Quandt, Decade of Decisions. American Policy Towards the Arab-Israeli Conflict.1967-1976, Berkely, 1977; 'տյոնի' Ten Years After Camp David, William Quandt Editor, Washington, 1988.

<sup>20</sup> George Lenczowski, American Presidents and the Middle East, Durham and London, 1990.



ներծավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորման և Մերծավոր Արևելքում Հայաստանի քաղաքական հետաքրքրությունների վերաբերյալ<sup>21</sup>:

Վերջին շրջանում հրատարակվել են մի շարք աշխատություններ, գերազանցապես հողվածներ, որտեղ արդեն քննարկման անմիջական առարկա է հանդիսանում Մեծ Մերծավոր Արևելքի նախագիծը: Դրանց հեղինակներն անդրադառնում են այդ նախագծի նպատակներին, տարածաշրջանի տարբեր երկրների արծագանքին, ծրագրի հեռանկարներին և այլն: Այդ բնույթի աշխատություններից են Ջոշուա Վոկերի, Թոմ Բարրիի, Ֆարուկ Հասանի, Իհսան Ահրարի, Վոկեր Պերտեսի, Մուհամմադ Սիդ-Ահմադի, Գամալ Էսամ ալ-Դինի, Էն Մելկերնի և այլոց հողվածները<sup>22</sup>:

Օգտագործված աղբյուրների մեջ զգալի տեղ են զրավում մամուլից և ամսագրերից, գերազանցապես արաբական, քաղված նյութերը, որոնցից լայնորեն օգտվել է հեղինակը: Դրան պետք է ավելացնել նաև անգլիական, ամերիկյան, ֆրանսիական և իսրայելական մամուլի տվյալներն ու տեղեկատվությունները:

Մեզ համար օգտակար են եղել նաև ինտերնետի՝ համացանցի նյութերը, հատկապես պաշտոնական փաստաթղթերի հայթայթման գործում:

**ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը բաղկացած է Առաջաբանից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կազմված է ենթաբաժիններից, Վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆՈՒՄ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական և քաղաքական կարևորությունը, հիմնավորվում են ատենախոսության նպատակները և խնդիրները, գիտական նորությունը, գործնական-կիրառական նշանակությունը, նշվում է նրա մեթոդաբանական հիմքը և տրվում օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ XX Դ. ՎԵՐՁԵՐԻՆ - XXI Դ. ՍԿԶԵՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԿԱՍԿԱՆ ՌԵԳԻՈՆԻ ՎՐԱ», բաղկացած է երեք ենթաբաժիններից:

<sup>21</sup> Nikolay Hovhannisyan, Foreign Policy of Armenia, Yerevan, 1999, Նսյնի՝ Formation of Transcaucasian - Middle Eastern Geopolitical Region, Yerevan, 2000.  
<sup>22</sup> Joshua W. Walker, Turkish Role in the Middle East, International Affairs Review, Vol. 14, No 1, Spring, 2005; Tom Barry, Middle East on the Road to Damascus With Neo-Cons, "Asia Times", March 12, 2004; Farooq Hasan, US and Lebanon: Unintended Power Shifts in the Middle East Greater Democracy, Beirut, August 2, 2006; Ehsan Ahrari, Saudi Arabia and Iran in Iraq Fix, "Asia Times", December 20, 2006; Volker Perthes, America's "Greater Middle East" and Europe: Key is Dialogue, "Middle East Policy", Vol. IX, Fall, 2004; Muhammad Sid-Ahmad, On the Greater Middle East, "Al-Ahram Weekly", February 25-March 3, Issue No 679, Cairo, 2004; Gamal Essam El-Din, Reform and Reformulating, "Al-Ahram Weekly", February 19-24, Cairo, 2004; Anne Malken, When Advocates Becomes Regulators, "The Denver Post", May 23, 2004.

Առաջին ենթաբաժնում՝ «Մոցիալիստական համակարգի վերացումը, միաբևեռ քաղաքական կենտրոնի տիրապետության հաստատումը և աշխարհաքաղաքական նոր իրադրությունը արաբական աշխարհում», քննարկվում են միջազգային հարաբերություններում ուժերի նոր հարաբերակցության հաստատման հարցերը, որն սառը պատերազմում սոցիալիստական համակարգի պարտության և Խորհրդային Միության կազմալուծման արդյունք էր, որը բացասական հետևանքներ ունեցավ արաբական երկրների վրա: Խորհրդային Միության անհետացման հետևանքով արաբական երկրները զրկվեցին Խորհրդային Միության քաղաքական, ռազմական, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական օգնությունից, որը թուլացրեց նրանց դիրքերը միջազգային և տարածաշրջանային հարաբերություններում: Դա հանգեցրեց արաբական համակարգի ընդհանուր թուլացմանը: Արաբները չկարողացան կողմնորոշվել միջազգային և տարածաշրջանային նոր ու փոփոխված իրադրություններում և իրենց անկարողությունը դրսևորեցին ազգային զարգացման նախագծեր ներկայացնելու հարցում, որը կարողանար դիմագրավել մարտահրավերներին և ապահովեր նրանց առաջնակարգ դերակատարումը Մերծավոր Արևելքում և նրա աշխարհագրական սահմաններից դուրս:

Առաջին գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Խաղաղության գործընթացը Մերծավոր Արևելքում», քննարկվում են մերծավորարևելյան կոնֆլիկտի կարգավորման ուղիների և խաղաղության գործընթացի հարցերը պատմական այն ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ը մնացել էր միակ գերտերությունը, հաստատվել էր միաբևեռ աշխարհ, և երբ ԱՄՆ-ին հաջողվում էր իր կամքը թելադրել, այդ թվում և արաբական աշխարհին:

Ատենախոսությունում այդ տեսանկյունից են լուսաբանվում խաղաղության գործընթացի հանգույնները, ինչպես Մայրիդի 1991թ. խաղաղության կոնֆերանսը ԱՄՆ-ի հովանու ներքո, որին հաջորդեցին Պաղեստինա-իսրայելական համաձայնագրերը (Օսլո I և Օսլո II), Հորդանանա-իսրայելյան հաշտության պայմանագրի ստորագրումը և այլն:

ԱՄՆ-ը նոր ուղիներ է փնտրում Մերծավոր Արևելքի բազմաշերտ հիմնահարցերը լուծելու համար: Այդ պահանջից ծնունդ առավ նաև Մեծ Մերծավոր Արևելքի նախագիծը:

Առաջին գլխի երրորդ ենթաբաժնից՝ «Ահաբեկչության դեմ պատերազմի հայտարարությունը և խառնաշփոթը ահաբեկչության և Իսլամի միջև», քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք ուղղակի առնչություն ունեն ատենախոսության առանցքային հարցերի հետ և օգնում են հասկանալու ատենախոսության հիմնական կոնցեպցիան: Մենք առաջին հերթին նկատի ունենք 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումը ԱՄՆ-ի վրա: Դրա ազդեցության տակ ԱՄՆ-ի ազգային անվտանգության ստրատեգիան հիմնարար փոփոխության ենթարկվեց: Ահաբեկչությունը դարձավ



օրակարգի գլխավոր հարցը և ԱՄՆ-ի քաղաքականությունը նպատակաուղղվեց այն դարձնել գերակա, լուսանցքային դարձնելով մնացած կարևոր միջազգային խնդիրները:

Ատենախոսության մեջ այն տեսակետն է արտահայտվում, որ 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից անմիջապես հետո ամերիկյան քաղաքականության մեջ սկսվեցին ահաբեկչությունն իսլամի հետ խառնաշփոթելու, նույնիսկ նույնացնելու փորձերը: Ամերիկյան հայտնի լրագրող Բոբ Վուդվորդն իր “Հարձակման ծրագիր” աշխատության մեջ հավաստում է, որ ամերիկյան ծայրահեղական նեոպահպանողականները 2001թ. սեպտեմբերի 12-ին, այսինքն Նյու Յորքի վրա կատարված ահաբեկչության հաջորդ օրն իսկ, պահանջել են պրեզիդենտ Բուշից “Պատերազմ հայտարարել իսլամին”<sup>23</sup>: Վերոնշյալ տեսակետները և մոտեցումները, ինչպես ցույց է տրված ատենախոսության մեջ, բացասաբար են ազդում ընդհանրապես մոսուլմանների, և մասնավորապես՝ արաբների վրա, և նպաստում արաբների բացասական կերպարի ձևավորմանը:

Արաբական երկրները կոչ էին անում ԱՄՆ-ի ղեկավարությանն ավելի սքափ մոտեցում ցուցաբերել ահաբեկչության և իսլամի հարցերում: ԱՄՆ-ը, սակայն, չանցաց բանականության ծայրին, և շատ չանցած ներկայացրեց Մեծ Մերձավոր Արևելքի իր նախագիծը:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ “ՄԵԾ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ. ՀԻՄՔԵՐԸ, ԴՐԴ-ԱՊԱՏԱՆՈՒՄԵՐԸ, ՊԱՐՏԱԴՐԱԼԸ ԵՎ ՌԵԱԿՑԻԱՆ ԵՐԱ ՆԿԱՏՄԱՍԲ”, հանդիսանում է ատենախոսության առանցքային գլուխը, կարելի է ասել ողնաշարը: Սույն գլխում փորձ է արվում հանգամանորեն լուսաբանել Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի ամբողջական համակարգը՝ սկսած հրապարակ նետված “Մեծ Մերձավոր Արևելք” նոր եզրից, աշխարհագրական սահմաններից և բովանդակությունից, վերջացրած ԱՄՆ-ի քաղաքական նպատակներով և այդ վիթխարի տարածքում գտնվող մոտ 25 երկրների և հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքը արևմտյան արժեքների հիման վրա վերակառուցելու ամերիկյան նկրտումներով:

Այդ հարցերն են քննության առնվել սույն գլխի վեց ենթաբաժիններում:

Երկրորդ գլխի Առաջին ենթաբաժինը՝ “Մերձավոր Արևելք եզրի և հայեցակարգի պատմական ծագումը. Զերականական թե՞ աշխարհաքաղաքական հարց”, ամբողջովին նվիրված է այդ եզրի ծագման, նրա աշխարհագրական սահմանների ու աշխարհաքաղաքական ասպեկտների քննարկմանը: Այդ հարցը կարևորվում է նրանով, որ, նախ, միշտ չէ, որ գոյություն է ունեցել նման եզր: “Մերձավոր Արևելք” եզրն առաջին անգամ օգտագործվել է XX դարի սկզբներին, սակայն մինչև օրս չկա “Մերձավոր Արևելք” եզրի միասնական և հաստատուն սահմանում: Այդ եզրը, աշխարհագրական

<sup>23</sup> Bob Woodward, Plan for Attack, New York, 2004.

առումով մերթ ընդդառնվում է, մերթ նեղանում՝ ըստ միջազգային քաղաքական պահանջների և մեծ տերությունների շահերի:

Ատենախոսության մեջ, պաշտոնական փաստաթղթերի և տեղեկատու գրականության տվյալների հիման վրա, քննարկվում են “Մերձավոր Արևելք” եզրի ամերիկյան, քրիստոնական, ֆրանսիական, արաբական և իսրայելական սահմանումները, որոնք բոլորը տարբերվում են մեկը մյուսից: “Մերձավոր Արևելք” եզրն անորոշ է, հստակ չէ, փոփոխական է, ինչը դռները լայնորեն բաց է անում քաղաքական զանազան կոմբինացիաների առջև:

Դրանից օգտվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշը, որը ամերիկյան նոր ստրատեգիայի շրջանակներում, սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումից հետո առաջին անգամ շրջանառության մեջ դրեց նոր՝ “Մեծ Մերձավոր Արևելք” եզրը՝ ֆանտաստիկ սահմաններով: 2004թ. փետրվարի սկզբներին ներկայացված այդ նախագծում “Մեծ Մերձավոր Արևելքի” մեջ մտցված էին արաբական բոլոր երկրները, Պակիստանը, Աֆղանստանը, Իրանը, Կենտրոնական Ասիայի և Աֆրիկյան եղջյուրի երկրները: Սակայն հետագայում, 2004թ. հունիսին, ամերիկյան նախագծի մեջ մտցվեցին որոշ փոփոխություններ: Դրա համաձայն՝ Մեծ Մերձավոր Արևելքը ձգվում է Մարոկկոյից հյուսիսային Աֆրիկայում, մինչև Աֆղանստան արևելքում, ներառնելով բոլոր արաբական երկրները, Թուրքիան, Իրանը, Իսրայելը, Աֆղանստանը և Պակիստանը: Նա միավորում է տարբեր երկրներ և ժողովուրդներ, տարբեր կրոններով և տարբեր լեզուներով: Նրանց մեկ աշխարհագրական կառույցի մեջ միավորողը այն իրողությունն է որ այդ երկրները, բացառությամբ Իսրայելի, իսլամական երկրներ են և պատկանում են իսլամական աշխարհին:

Այսպիսով “Մերձավոր Արևելք” եզրի էության վերլուծությունը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ “Մերձավոր Արևելք” եզրը ոչ թե քերականական-լեզվաբանական հնարանք է, այլ աշխարհաքաղաքական երևույթ:

Երկրորդ ենթաբաժնում՝ “Նախկին՝ նախքան Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը, առաջարկությունները և նախագծերը: Փոփոխություններ ամերիկյան ստրատեգիական քաղաքականության մեջ”, ընդգծվում է այն միտքը, որ Մեծ Մերձավոր Արևելքի ծրագիրը հանկարծակի չհայտնվեց: Նա նախապատրաստված էր նախկին պատմական զարգացումներով և բազմաթիվ առաջարկություններով ու ծրագրերով, որոնք ներկայացվում էին ԱՄՆ-ի և արևմտյան այլ պետությունների կողմից ստրատեգիական առումով կարևոր այդ տարածաշրջանի վերաբերյալ: Եվ նախքան անցնելը Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի քննարկմանը, նպատակահարմար ենք համարել սույն բաժնում համառոտակի քննարկման ենթարկել Մերձավոր Արևելքի վերաբերող մի շարք առաջարկություններ, որոնք ներկայացվել են արևմտյան տերությունների



նախաձեռնությամբ՝ Մերձավոր Արևելքը քաղաքական և ռազմական առումով վերածնելու նպատակով: Դա անհրաժեշտ է նաև այն տեսանկյունից, որ օրգանական կապ գոյություն ունի այդ նախագծերի և Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի միջև:

Այդ առաջարկությունները հաջողություն չունեցան, քանի որ նրանք, մեր կարծիքով, թեև հասցեագրված էին Մերձավոր Արևելքին, սակայն իրականում կյանքի էին կոչված արևմտյան երկրների՝ առաջին հերթին ԱՄՆ-ի ստրատեգիական, քաղաքական և տնտեսական շահերից ելնելով, չէին պարունակում իրատեսական և արդարացի առաջարկություններ մերձավորարևելյան հիմնախնդիրների լուծման համար:

Այս ենթաբաժնում քննության է առնվել նաև ամերիկյան ստրատեգիայում տեղի ունեցած տրանսֆորմացիան XXI դարի սկզբին, ինչը նախորդել է Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի առաջադրմանը: Այդ հարցի ուսումնասիրությունը մեզ քերել է այն եզրակացության, որ նախորդ առաջարկությունների կիրառման ձախողումից հետո, ԱՄՆ-ը որոնումների մեջ էր: Նա փնտրում էր մի այնպիսի նախագիծ, որը կարող էր թույլ տալ մշակել համապատասխան ստրատեգիական քաղաքականություն դրա իրականացման համար: Ծրագրի իրականացման հարցը գալիս է առաջին պլանի վրա և դառնում կենտրոնական ամերիկյան մերձավորարևելյան ստրատեգիայի մեջ: Այդ որոնումը հանգեցրեց ամերիկյան ստրատեգիայի տրանսֆորմացիային XXI դարի սկզբներին, որը մենք համարում ենք Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի առաջադրման նախապատրաստական փուլ: Այդ նոր ստրատեգիայի էությունն է՝ հարձակողական, վճռական և միակողմանի քաղաքականության որդեգրում: Այդ նոր քաղաքականությունը նախատեսում է արագորեն մի ստրատեգիայից անցնել մեկ ուրիշ ստրատեգիայի, մեկ տակտիկայից՝ մեկ այլ տակտիկայի:

Փաստաթղթերի վերլուծության հիման վրա ատենախոսությունում այն եզրակացությունն է արվում, որ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ գերակայող է դառնում աշխարհի վրա իր տիրապետությունը հաստատելու միտումը և ուժի գործադրումով իրեն որպես աշխարհի միակ քաղաքական բևեռ պարտադրելը:

Երրորդ ենթաբաժինը՝ *“Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը”*, պարունակում է այդ նախագծի ամբողջական տեքստը:

Այդ նախագծի մասին առաջին անգամ հայտնի դարձավ 2004թ. փետրվար ամսին, թեև այնուհետև Բուշը պատրաստվում էր այն պաշտոնապես ներկայացնել Մեծ ութնյակի 2004թ. հունիսին կայանալիք գագաթաժողովին: Սակայն կան տեսակետներ, որ այդ նախագծի արտահոսքը կատարվել էր դիտավորյալ և նրա տեքստը հայտնի դարձավ հանրությանը, երբ 2004թ. փետրվարի 13-ին Լոնդոնում արաբերեն լույս տեսնող “Ալ-Հայաթ” օրաթերթն իր էջերում հրատարակեց նրա ամբողջական տեքստը: Հավանաբար դա արվել էր այն նպատակով, որպեսզի տեսնեին, թե այդ առաջարկությունն ինչպիսի

արձագանք կգտնի: Ինչևիցե, պրեզիդենտ Բուշը Մեծ Մերձավոր Արևելքի տեքստը պաշտոնապես ներկայացրեց 2004թ. հունիսի 8-10-ը, Տեխասի նահանգի Մի Այլընդում գումարված G-8-ի նիստերից մեկի ժամանակ:

Ատենախոսության մեջ ներկայացվել է նախագծի ամբողջական տեքստը՝ ելնելով նրա կարևոր լինելու նկատառումից և ընթերցողին հնարավորություն տալու անձամբ ծանոթանալու դրան, նրա բոլոր հիմնադրույթներին, առանց որևէ կրճատումների կամ հեղինակային միջամտության, որպեսզի նա ինքն իր սեփական կարծիքն ունենա:

Փաստաթղթում արդեն վերջնական տեսքով տրված են “Մեծ Մերձավոր Արևելքի” աշխարհագրական սահմանների այն տարբերակը, որը տվյալ պահին ընդունելի է ԱՄՆ-ի վարչակարգի համար: Նրանում ասված է, որ “Մեծ Մերձավոր Արևելքը վերաբերում է արաբական աշխարհի երկրներին՝ գումարած Պակիստանը, Աֆղանստանը, Իրանը, Թուրքիան և Իսրայելը”<sup>24</sup>: Եթե ընդունենք, որ արաբական աշխարհում կա 18 անկախ պետություն և մեկ ինքնավարություն՝ Պաղեստինի ինքնավարությունը, դրանց ավելացրած վերոնշյալ 5 ոչ արաբական պետությունները, ապա ստացվում է, որ Մեծ Մերձավոր Արևելքն իր մեջ ներառում է 24 երկիր՝ ձգվելով Մարոկկոյից և Սալվիտանիայից մինչև Աֆղանստան և Պակիստան: Նրա ընդհանուր տարածքը կազմում է 16 մլն քլմ, որից 14 մլն քլմ՝ զբաղեցնում է արաբական աշխարհը, իսկ քնակչությունը կազմում է մոտ 350-400 մլն մարդ:

Փաստաթուղթը կազմված է երկու մասից: Առաջին մասը պրեամբլում է, որտեղ նշված է, որ “Մեծ Մերձավոր Արևելքը միջազգային հանրության համար ներկայացնում է բացառիկ մարտահրավեր և հնարավորություն”: Ընդգծվում է նրա երեք “դեֆիցիտների”՝ ազատության և զիտելիքների պակասի ու կանանց իրավագրկության մասին, որն իր “ներդրումն ունի Մեծ ութնյակի բոլոր անդամների ազգային շահերի սպառնալիքների մեջ”, և քանի դեռ այդ տարածաշրջանում որոշակի փոփոխություններ տեղի չեն ունեցել, “մենք ակամատես կլինենք ծայրահեղականության, ահաբեկչության, միջազգային ոճրագործության և անօրինական ներգաղթի մեծացմանը”:

Փաստաթղթի ներածականում քերված են մի շարք փաստեր և թվական տվյալներ, որոնք բնութագրում են արաբական երկրներում տիրող սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Նման իրադրության պահպանումը, ասված է փաստաթղթում, “նորակի սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանի կայունությանը և G-8-ի անդամների ընդհանուր շահերին”: Փաստաթղթի հեղինակները ելք ստեղծված ծանր իրավիճակից տեսնում են մի շարք արժատական բարեփոխումների մեջ:

Փաստաթղթի երկրորդ մասում, ինչպես ցույց է տրված ատենախոսության մեջ, ներկայացված են առաջարկվող բարեփոխումները, որոնք ընդգրկում են երեք

<sup>24</sup> “Al-Hayat”, London, February 13, 2004.



բնագավար՝ ա/ ժողովրդավարության և լավ կառավարման զարգացում, բ/ գիտելիքների վրա հիմնված հասարակության կառուցում և դ/ տնտեսական հնարավորությունների ընդլայնում:

Ատենախոսության Չորրորդ ենթաբաժնում՝ *“Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի հայտարարված պատճառները. Վերլուծություն և մեկնաբանություններ”*, փորձել ենք վերլուծել և մեկնաբանել Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հիմնական դրույթները և մոտեցումները, որոնք հռչակված են ամերիկյան նախագծում::

Ամերիկյան նախագիծն ընդգծում է տարածաշրջանում քարեփոխումներ իրականացնելու կարևորությունը, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել անակնկալների: Սակայն դրա հետ միասին հարկադրված ենք արձանագրել, որ իրական մոտիվը ձգտումն է ապահովել Միացյալ Նահանգների շահերը և կանխել հնարավոր քաղաքական և սոցիալական ցնցումները և պայթյունները, որոնք կարող են փոխել գոյություն ունեցող իրավիճակը և վերաճնավորել տարածաշրջանն այնպես, որը կարող է չհամապատասխանի ամերիկյան կայսերական շահերին: Իսկական դրոյապատճառը ժողովրդավարությունը տարածելը չէ, տարածաշրջանի բարգավաճումը, աշխատատեղերի ստեղծումը, արդարադատության հաստատումը կամ լավ կառավարումն ապահովելը չէ, այլ այդ նոր միջոցներով և մեթոդներով, որոնք բնորոշ են գլոբալիզացիայի դարաշրջանին , այդ տարածաշրջանի վրա ամերիկյան վերահսկողությունը հաստատելն ու պահպանելն է:

Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հողվածները մի փորձ են այդ տարածաշրջանի երկրներին պարտադրել և թելադրել ամերիկյան կոնցեպցիան, որը պետք ապահովի ամերիկյան շահերը այդ կարևոր շրջանում: Ատենախոսությունում այդ նույն պրիզմայով է դիտարկված և գնահատված ՄՄԱ նախագծի մարդու իրավունքներին, անկախ լրատվամիջոցներին, հրապարակայնությանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը և համանման հարցերին վերաբերող հատվածները :

Այդ հարցի վերաբերյալ մեր մոտեցումը, որը հիմնված է արաբական իրականության իմացության և նրան վերաբերող նյութերի մանրագնին ուսումնասիրության վրա, կայանում է նրանում, որ Մերձավոր Արևելքի երկրները արդար, ազնիվ և շարունակական զարգացման ստրատեգիայի կիրառման կարիքն ունեն, մի ստրատեգիայի, որն առաջին հերթին պետք է հաստատի սոցիալական արդարություն, ներառյալ միջին և բարձրագույն կրթության հնարավորություն, առողջապահական մատչելի համակարգ բնակչության բոլոր խավերի համար, և այլն:

Հինգերորդ ենթաբաժինը՝ *“Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի չհայտարարված խնդիրները.. Վերլուծություն և մեկնաբանություններ”* , նվիրված է առանցքային մշակակություն ունեցող մի շարք հարցերի քննարկմանը, որոնք տրամաբանորեն բխում են

Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի հողվածներից և դրույթներից, և որոնց մասին խոսք չկա նախագծի բուն տեքստում:

Այստեղ ամենակարևոր հարցերից մեկը, որ ծառայում է հետազոտողի առջև այն է, թե ինչու ԱՄՆ-ը հենց Մեծ Մերձավոր Արևելքը և նրա միջուկը հանդիսացող արաբական աշխարհն ընտրեց որպես իր նոր հարձակողական ստրատեգիան կիրառելու ասպարեզ և փորձադաշտ՝ իր հավանական թշնամուն կանխարգելիչ հարված հասցնելու համար: “Գաղտնիքը” կայանում է նրանում, որ ԱՄՆ-ի ընտրությունը, մեր կարծիքով, ընկավ Մեծ Մերձավոր Արևելքի վրա, քանի որ այդ վիթխարի տարածաշրջանն իր ստրատեգիական կարևորությամբ, բնական հարստություններով, առաջին հերթին էներգակիրների վիթխարի պաշարներով, մարդկային ներուժով, իր համարժեքը չունեցող տարածաշրջան է, որի մշակակությունը համաշխարհային մասշտաբով քանի գնա, այնքան մեծանալու է, և նա ոչ հեռու ապագայում միջազգային ազդեցության կենտրոններից մեկը կարող է դառնալ: ԱՄՆ-ը, ելնելով գոյալ հեգեմոնիայի իր կոնցեպցիայից չի կարող թույլ տալ, որ այդ շրջանը մնա անորոշության մեջ: Եվ դեպքերի զարգացումն իր հսկողության տակ պահելու և դրանք ուղղորդելու պահանջից ելնելով, նա առաջադրեց Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը, հույս ունենալով ժողովրդավարության զարգացման, կառավարման համակարգի բարելավման, տնտեսական, սոցիալական, գիտակրթական և առողջապահության ոլորտում ռեֆորմների կիրառման քողի տակ, իր վերահսկողությունը հաստատել և ուժեղացնել այդ տարածաշրջանի վրա: ԱՄՆ-ի այդ քաղաքականության կիրառման գործում չպետք է նաև հաշվից դուրս նետել ԱՄՆ-ի դաշնակից Բարայելի ազդեցությունը և շահագրգռվածությունն այդ քաղաքականության մշակման և իրականացման գործում: Հարկավ, նման մտքեր որևէ մեկը չի կարող գտնել Նախագծի փաստաթղթում:

Մյուս կարևոր ասպեկտը՝ դա արաբական ինքնության հարցն է, ավելի ճիշտ՝ արաբական ինքնության պահպանման հարցը: Հետազոտողի աչքից չի կարող վրիպել, որ Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը *“Մեծ Մերձավոր Արևելք”* կոչված վիթխարի տարածքը արևմտյան արժեքների հիման վրա վերափոխելու մի փոստգավոր փորձ է՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային-կրթական ռեֆորմներ քողի տակ, որի հետևանքներից մեկը կարող է լինել արաբական համակարգի թուլացումը և արաբական ինքնության վերացումը:

Ատենախոսությունում առանձին քննարկման առարկա է նաև Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի թաքնված նպատակներից մեկը ևս: Այդ նախագիծը, որը դրսից՝ ԱՄՆ-ի կողմից, պարտադրվում է արաբական և մյուս երկրներին, վերջին հաշվով նպատակ ունի Արևմուտքի հեգեմոնիան հաստատել Մեծ Մերձավոր Արևելքի վրա:



Երկրորդ գլխի վերջին՝ Վեցերորդ ենթաբաժինը կրում է *“Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի հանդեպ ամենակարևոր հակազդեցությունները”* խորագիրը, որը քննարկվող հարցերի կարևորության առումով ատենախոսության ամենաէական հատվածներից մեկն է: Այստեղ պաշտոնական սկզբնաղբյուրների և դրանց վերլուծության հիման վրա լուսարձակում են արաբական, քուրդական, իրանական և իսրայելական դիրքորոշումները ՄԱՄ-ի նկատմամբ, ինչպես նաև հակիրճ անդրադարձ կատարվում ՆԱՏՕ-ի և եվրոպական մոտեցումներին:

Ատենախոսության *“Արաբների դիրքորոշումը”* հատվածում ցույց է տրվում, որ արաբական, քաղաքական հոսանքները, մտավորականությունը, քաղաքական միտքը, ուսումնասիրելով և վերլուծելով Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի հիմնադրույթները, հանգեցին այն եզրակացությանը, որ այդ նախագիծը լուրջ մարտահրավեր է արաբ ազգին, քանի որ նա իր համար թիրախ է դարձրել արաբների երկիրը, բնակչությունը, նրա ինքնությունը և պատմական, քաղաքական ու մշակութային ժառանգությունը: Նախագիծը սպառնալով արաբական ինքնությանը, սպառնում է նաև արաբական երկրների ինքնիշխանությանը և արաբական աշխարհը վերածում սոսկ աշխարհագրական միջավայրի: Արաբական այն երկրները և ուժերը, որոնք խիստ բացասական դիրք են գրավել Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նկատմամբ, նշում են նաև, որ այդ նախագիծը արաբներին պարտադրվել է դրսից՝ առանց նախնական խորհրդակցության՝ արաբական երկրների հետ: Եվ, վերջապես, արաբներին խիստ զայրացնում է ահաբեկչությունը իսլամի և արաբների ազգային բնավորության հետ կապելը կամ նույնացնելը:

Ատենախոսությունում հանգամանորեն և առանձին-առանձին լուսարձակում են արաբական առաջատար երկրների, մասնավորապես Եգիպտոսի, Սիրիայի, Մաուրիան Արաբիայի, Լիբանանի, Մարոկկոյի և արաբական մյուս երկրների դիրքորոշումը, որոնք պաշտոնապես հանդես եկան Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի ընդունման դեմ: Ինչպես հաստատում են այդ փաստաթղթերը, դրանում կարևոր դերակատարում ունեցավ Եգիպտոսը և նրա պրեզիդենտ Մուբարակը, որը փաստորեն գլխավորեց և ուղղություն տվեց արաբական երկրների շարժման ընդդեմ ՄԱՄ-ի: Համանման դիրք գրավեց Արաբական պետությունների լիգան, ինչպես նաև արաբական պետությունների ղեկավարների 2004թ. մայիսին Թունիսում գումարված զագաթաժողովը, որը մերժեց դրսից պարտադրված նախագիծը և զայրույթով հերքեց ահաբեկչությունը իսլամի և մուսուլմանական ժողովուրդների հետ նույնացնելու միտումները: Իսկ արաբական և մուսուլմանական որոշ ընդդիմադիր շրջանների հիմնական լոզունգը դարձավ *“Դրսից՝ տանկերի վրա եկող ռեֆորմի դեմ, կպայքարենք”*:

Սակայն կային արաբական երկրներ, որոնք դեմ չէին Մեծ Մերձավոր Արևելքի ամերիկյան նախագծին, գտնելով, որ որոշ բարեփոխումներ, այնուամենայնիվ, անհրաժեշտ են: Դրանք գլխավորապես Ծոցի արաբական երկրներն էին՝ բացի Մաուրիան Արաբիայից, որոնք Ծոցի առաջին և երկրորդ պատերազմներից հետո կախման մեջ ընկան ԱՄՆ-ից՝ իրենց ազգային անվտանգությունն ապահովելու և տնտեսական համագործակցության հարցերում: Նրանք կոչ էին անում չմերժել Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը սոսկ այն պատճառով որ այն առաջադրվել է Միացյալ Նահանգների կողմից, և ընդունել, որ արաբական երկրները քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում իրոք ռեֆորմների կարիք ունեն:

Իսկ արաբական երկրների մի ոչ մեծ խումբ էլ գրավեց սպասողական, տատանողական դիրք և չէր շտապում հստակություն մտցնել իր դիրքորոշման մեջ:

Փաստաթղթերի և հարցի բազմակողմանի ուսումնասիրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ արաբները դեմ արտահայտվելով ամերիկյան նախագծին, ընդհանրապես դեմ չէին իրենց երկրներում քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ռեֆորմների կիրառմանը: Անգամ դրա անհրաժեշտությունն ընդունեցին արաբական պետությունների ղեկավարները: Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հրապարակում հայտնվելը խթանեց այդ հարցի բարձրացմանը և քննարկմանը արաբական հասարակության ներսում՝ հաղորդելով նրան սուր բնույթ: Միայն թե նրանք գտնում էին, որ այդ ռեֆորմները պետք է կատարվեն ներսից, առանց արտաքին պարտադրանքի, անգամ՝ նշվում, որ արաբներն ուշացել են այդ հարցում: Մատնանշվում էր նաև, որ ռեֆորմները պետք է իրագործվեն աստիճանաբար, առանց սուր ցնցումների:

Հարցի ուսումնասիրությանը և քննությունը, փաստաթղթերի և նյութերի վերլուծությունը հիմք է տալիս այն կարծիքն արտահայտել, որ արաբների դիրքորոշումը՝ ըստ Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նկատմամբ գրաված դիրքի, կարելի է բաժանել չորս խմբի:

Առաջին խումբը, որն ամենամեծն ու ազդեցիկն է, մերժում է նախագիծը:

Երկրորդ խումբը՝ հավանություն է տալիս, սակայն պահանջում է կառուցողական երկխոսություն Միացյալ Նահանգների հետ:

Երրորդ խումբը կոչ է անում դեռ սպասել և վերջնական որոշում ընդունել ԱՄՆ-ի հետ ավելի հանգամանալի հաղորդակցվելուց հետո:

Չորրորդ խումբը վերապահում է անում նախագծի նկատմամբ, և պահանջում ԱՄՆ-ից բացատրություններ և ապացույցներ իր իսկական մտադրությունների մասին:

Այդուհանդերձ արաբական աշխարհի ճնշող մեծամասնության դիրքորոշումը Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նկատմամբ ժխտողական-մերժողական է:



Այս բաժնում քննարկվող հարցերի մեջ իր կարևորությամբ և յուրահատկությամբ աչքի է ընկնում Թուրքիայի դիրքորոշման հարցը Մեծ Մերձավոր Արևելքի ծրագրի հանդեպ:

Նախ նշենք, որ ընդհանրապես ՄՄԱՆ-ը հարուցեց աշխույժ քննարկումներ մաս ոչ արաբական երկրներում, այդ թվում և Թուրքիայում, մանավանդ, որ ԱՄՆ-ը հատուկ տեղ էր հատկացնում Թուրքիային ՄՄԱՆ-ի ծրագրի իրականացման գործում, այն համարելով, Իսրայելի հետ միասին, իր կարևոր հենարաններից մեկը: ԱՄՆ-ի պրեզիդենտ Բուշը, փոխ պրեզիդենտը և այլ բարձրաստիճան պետական պաշտոնյաներ բազմիցս հայտարարել էին “Թուրքիան որպես չափավոր իսլամական պետության մոդել” ՄՄԱՆ-ի մեջ ընդգրկված բոլոր երկրների համար: Բուշն այնքան մեծ կարևորություն էր տալիս Թուրքիայի դերակատարմանը, որ անգամ հանդես եկավ Սաամրուլի Գալաթասարայ համալսարանում, թուրքական կողմին ներկայացնելով իր նկատառումները նախագծի կիրառման գործում Թուրքիայի դերի վերաբերյալ:

Ատենախոսության մեջ թուրքական փաստաթղթերի և այլ աղբյուրների հիման վրա ցույց է տրվում, որ Թուրքիայում դիսկուսիա ծավալվեց ոչ թե այն հարցի շուրջը՝ պաշտպանել թե չպաշտպանել Մեծ Մերձավոր Արևելքի ծրագիրը, քանի որ նա կողմ էր այդ նախագծին, այլ Թուրքիայի չափավոր իսլամական պետություն լինելու հարցի շուրջը: Դրան անգամ մասնակցեցին պետության ամենաբարձրաստիճան դեմքերը՝ վարչապետը, պրեզիդենտը, քաղաքական գործիչներ և այլն:

Ատենախոսության մեջ հանգամանորեն քննարկվում է այդ հարցը՝ Անկարայի պաշտոնական դիրքորոշումը Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նկատմամբ: Թուրքիան հրավիրվել էր G-8-ի գագաթաժողովին, որի մասին վարչապետ Էրդողանը հայտնել էր իր Արդարություն և Բարգավաճում կուսակցության փակ ժողովում: Այնտեղ նա հայտարարեց՝ “Թուրքիան գագաթնաժողովը դիտում է որպես մի կարևոր քայլ տարածաշրջանում ռեֆորմներ սկսելու ջանքերի ուղղությամբ և Թուրքիան չի ցանկանում դուրս մնալ այդ զարգացումներից”: Էրդողանը բազմիցս հայտարարել է, որ պաշտպանելով Մեծ Մերձավոր Արևելքի նախաձեռնությունը Թուրքիան ունի նաև վերապահումներ՝ կապված Թուրքիայի իսլամական պետություն լինելու կամ չլինելու հարցի հետ: Թուրքիայի վերապահումը վերաբերում էր հենց այդ հարցին, որի վերաբերյալ Էրդողանը ստիպված էր անել հատուկ հայտարարություն՝ “Թուրքական ղեկավարները բազմիցս ասել են, որ Թուրքիան չի ցանկանում լինել “չափավոր իսլամական մոդել” Մեծ Մերձավոր Արևելքի երկրների համար, որովհետև նա աշխարհիկ պետություն է”:

Ավելի խիստ դիրքորոշում գրավեց այդ հարցում Թուրքիայի պրեզիդենտ Սեզերը, որը հայտարարեց, որ “Դեմոկրատիան և կրոնական պետությունն անհամատեղելի են”, կշտամբելով ԱՄՆ-ին նրա ոչ ճիշտ դիրքի համար: Նա այդ հարցի մասին ավելի

հանգամանորեն խոսեց 2004թ. հունիսի 2-ին Թուրքիայի պառլամենտի նստաշրջանում, որտեղ նա հայտարարեց, որ սխալ է Թուրքիան նկարագրել որպես Իսլամական Հանրապետություն կամ չափավոր իսլամի մոդել, որը կարող է օրինակ լինել Մեծ Մերձավոր Արևելքի մեջ ընդգրկված երկրների համար: “Մենք գտնում ենք անընդունելի է փորձել Թուրքիան վերածել չափավոր իսլամի մոդել կամ այն դարձնել իսլամական երկիր”: Թուրքիայի պրեզիդենտն ընդգծում է, որ “Թուրքիայի Հանրապետության վարչակարգը հիմնված է Աթաթուրքի սկզբունքների վրա”<sup>25</sup>:

Հակառակ այդ վերապահումներին, Թուրքիան պաշտոնապես լուրջ աջակցություն էր ցուցաբերում Բուշի Մեծ Մերձավոր Արևելքի նախագծին: Նա դարձավ և շարունակում է մնալ այդ նախագծի իրագործման առավել հուսալի դաշնակիցը:

Ատենախոսության մեջ նշվում է, որ թուրքական կառավարության պաշտոնական դիրքը պաշտպանություն էր գտնում երկրի ներսում: Թուրքական մամուլը ողողված էր մեծ մյուսբերով, թուրքական քաղաքական և հասարակական գործիչները հանդես էին գալիս ելույթներով, հայտարարություններով, դասախոսություններով ի պաշտպանություն ՄՄԱՆ-ի և Թուրքիայի մասնակցության դրա իրագործմանը<sup>26</sup>:

Մյուս կարևոր հարցը, որ քննարկվում է ատենախոսության այս ենթաբաժնում՝ Իրանի դիրքորոշման հարցն է, որը ԱՄՆ-ի կողմից մույնպես մտցվել էր Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի մեջ և ենթակա էր քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթամշակութային վերափոխումների, ինչպես Մեծ Մերձավոր Արևելքի մեջ ընդգրկված մյուս երկրները: Սակայն ի տարբերություն Թուրքիայի, որը դարձավ այդ նախագծի ջատագույր, Իրանի դիրքորոշումը՝ թե՛ ղեկավարության, և թե՛ ամբողջությամբ երկրի, խիստ բացասական էր: Իրանն առաջին օրվանից հանդես եկավ այդ նախագծի խիստ քննադատությամբ և կոչ արեց իսլամական բոլոր երկրներին միասնական ճակատով հանդես գալ ամերիկյան նախաձեռնության դեմ: Իսկ Իրանի նախկին պրեզիդենտ Մուհամմադ Խաթամին հանդես եկավ ամերիկյան Մեծ Մերձավոր Արևելքի փոխարեն “Մեծ Իսլամական Արևելք” ստեղծելու առաջարկությամբ: Իրանի մեջլիսի նախագահ Դոլան Ալի Հադադ Ադիլը Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցների ուժեղացումը կապում էր Մեծ Մերձավոր Արևելքի վերաբերյալ ԱՄՆ-ի ծրագրերի հետ, դրանք համարելով “աստանայական դավադրություն”<sup>27</sup>: Իրանի քաղաքական առաջնորդների դիրքորոշումը, ինչպես վկայում են մեր կողմից օգտագործված աղբյուրները, լիակատար պաշտպանություն գտավ Իրանի զինվորականության կողմից՝ ի դեմս Իրանի պաշտպանության նախարար, փոխ ծովակալ Ալի Շամխանի: Վերջինս դեմ դուրս եկավ

<sup>25</sup> Turkish President : Democracy and Religion State Are Not Compatible, <http://www.aina.org/news>  
<sup>26</sup> Turkey Enthusiastic about US “Greater Middle East”, , Turks.US Daily News, February 17, 2004.  
<sup>27</sup> Majlis Speaker: Imposition of Sanctions on Iran in Line with US Greater Middle East Plan, <http://www2.ima/en/news/view>



Մեծ Մերձավոր Արևելքի ստեղծման ամերիկյան նախագծին, նշելով, որ դա “սպառնում է ոչ միայն Իրանին, Սիրիային և Լիբանանին, այլև իսլամական Ումմային, ամբողջ իսլամական ռեգիոնին”՝ ահաբեկչության դեմ պայքարի կեղծ պատրվակի տակ: Պայքարը ահաբեկչության դեմ իրականում պայքար է Իսլամի դեմ”:

Սակայն ամերիկյան նախագծի դեմ Իրանի դիրքորշման գործում, անկասկած, գլխավորը Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեի մոտեցումներն են: Նա գտնում է, որ այդ նախագիծն անտեսում է տարածաշրջանի ժողովուրդների արժեքները և մշակույթը: Ալի Խամենեին թեհրանում իսլամական պետությունների բանկերի ներկայացուցիչների համաժողովում ունեցած ելույթի ժամանակ հայտարարեց, որ ինքը մերժում է ԱՄՆ-ի փորձերը իսլամական երկրներին պարտադրել արևմտյան դեմոկրատիա և ռեֆորմներ, հույս հայտնելով, որ իսլամական աշխարհը կարող է նվաճել կարևոր դիրքեր “հենվելով իր ինաստուության և միասնության վրա”<sup>28</sup>:

Ատենախոսության մեջ առանձին քննարկման առարկա է դարձել նաև Իսրայելի դիրքորշումը: Իսրայելն առաջին օրվանից դարձավ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի ամենաչեղճ պաշտպանը և այդ հարցում Իսրայելի ու Թուրքիայի հետ միասին գտնվում է միևնույն շարքում: Իսրայելը Թուրքիայի հետ միասին դարձավ ԱՄՆ-ի ամենահուսալի հենարանը : Որոշ իմաստով նույնիսկ կարելի է ասել, որ Իսրայելն ավելի բարձր է գնահատվում, քան թե Թուրքիան, որովհետև նա Բուշի աչքում թվում է ավելի իրապես դեմոկրատական երկիր , մինչդեռ Թուրքիան համարվում է “չափավոր իսլամական երկիր”:

Կարող ենք ասել, որ Իսրայելն իր հերթին շահագրգռված է արաբական աշխարհում ռեֆորմներ կիրառելու մեջ: Վերլուծելով փաստերը և իսրայելական համապատասխան փաստաթղթերը, վստահաբար կարելի է եզրակացնել, որ Իսրայելը հույս ունի Սիացյալ Նահանգների օգնությամբ այդ նախագծի իրագործմանը տալ այնպիսի ընթացք, որը համապատասխանի նրա շահերին: Նա ակնկալում է արաբական համակարգը բուլացնելու և արաբական աշխարհը մասնատելու օգնությամբ ապահովել Իսրայելի մուտքը մերձավորարևելյան համակարգ, որը նրան կենտրոնական դեր կհատկացնի այդ համակարգում և տիրապետող դեր տնտեսական, ռազմական և քաղաքական ասպարեզներում: Իսրայելը փայփայում է տնտեսապես գերտերություն դառնալու հույսեր:

Ատենախոսության մեջ ցույց է տրվում, որ Իսրայելի դիրքորշումը խիստ քննադատության է ենթարկվում արաբների կողմից: Քննադատվում է նաև Բուշի քաղաքականությունը, որը նպատակաուղղված է միակողմանիորեն պաշտպանել Իսրայելին և նրա քաղաքական, ռազմական և տնտեսական նկրտումները:

Ընդհանուր գծերով ահա այսպիսին է Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի հիմնական դերակատարների դիրքորշումը:

Ատենախոսն այս ենթաբաժնում հակիրճ կերպով անդրադարձել է նաև Եվրոպայի, ՆԱՏՕ-ի, ինչպես նաև ամերիկյան ընդդիմության մոտեցումներին Մեծ Մերձավոր Արևելքի նախագծին:

Ատենախոսության ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ “ՄԵԾ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՄԱՆ-ԻՆ ՄՈՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ”, կազմված է երեք ենթաբաժիններից, որտեղ քննարկվում են Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի հրապարակումից հետո ստեղծված իրադրությունը, նրա հնարավոր այլընտրանքները և մարտահրավերները:

Երրորդ գլխի Առաջին ենթաբաժնում՝ “Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի ներգործությունը”, ուսումնասիրվել են այդ նախագծի քաղաքական ազդեցությունը, տնտեսական, սոցիալական և մշակութային հետևանքները արաբական երկրներում: Այդ առանցքային հարցերի ուսումնասիրությունը հանգեցրել է այն եզրակացությանը, որ թեև արաբական երկրների մեծամասնությունը, տարբեր կուսակցությունները, կազմակերպությունները և լրատվամիջոցները, տարբեր քաղաքական ուժերը մերժում են Բուշի Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի նախագծի, այդուհանդերձ, դա որոշ ազդեցություն ունեցավ արաբական իրադրության, մենտալիտետի և քաղաքական զգացումների վրա: Մերժելով հանդերձ այդ նախագիծը որպես օտար և դրսից պարտադրված, արաբները, ներառյալ նրանց առաջնորդները, ընդունում են, որ իրենց առաջադիմությունը և զարգացումը պահանջում է ռեֆորմներ, որը չի պարտադրվելու դրսից, այլ նախաձեռնելու են իրենք, իրենց սեփական կամքով և որոշումներով:

Ուստի պետք է ընդունել, որ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծը կամա թե ակամա խթանեց ռեֆորմների գործընթացը արաբական աշխարհում: Եվ, իրոք, դրանից հետո արաբական երկրներում քաղաքական փոփոխությունների գործընթաց սկսվեց՝ թեև շատ դանդաղ, փոքր ծավալներով և միայն որոշակի ոլորտներում:

Ամենանշանակալի փոփոխություններ սկսվեցին քաղաքական ասպարեզում արաբական մի քանի երկրներում: Սակայն նրանք խուսափում էին օգտագործել “ռեֆորմներ” եզրը և գերադասում էին օգտագործել “զարգացում և արդիականացում” եզրը:

Ատենախոսությունում քննարկվում և լուսաբանվում են այն քաղաքական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Եգիպտոսում, որտեղ առաջին անգամ 2005թ. պրեզիդենտական ընտրություններն անցկացվեցին այլընտրանքային սկզբունքով, Սաուդյան Արաբիայում, որտեղ երկրի պատմության մեջ առաջին անգամ անցկացվեցին տեղական մարմինների ընտրություններ և ընդունվեց ինչ-որ փաստաթուղթ, որը կոչվեց

<sup>28</sup> Iran's Khamenei Calls For Resistance to US Plan on Middle East, Iran Focus, July 4, 2007.



սահմանադրական, Բահրեյնում, որտեղ իշխանությունները հաշվի առան ընդդիմության պահանջները, Քուվեյթում, որտեղ ընդլայնվեցին կանանց իրավունքները, իսկ Ալժիրում փոփոխության ենթարկվեց սահմանադրությունը և դեմոկրատիան հայտարարվեց կառավարման հիմնական մեթոդը: Տեղաշարժեր կատարվեցին նաև Սիրիայում, որտեղ պրեզիդենտ Բաշար Ասադը խոստացավ բարեփոխումներ կիրառել և դիմեց բնակչությանն օգնել իրեն, Օմանում, Կատարում և այլն:

Ատենախոսության այս ենթաբաժնում անդրադարձել ենք նաև Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի ազդեցության տակ տեղի ունեցած սահմանափակ տեղաշարժերին և փոփոխություններին անվտանգության, սոցիալական, մշակութային և տնտեսական ոլորտներում:

Երրորդ գլխի Երկրորդ ենթաբաժինը նվիրված է “ *Այլընտրանքներ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծին*” հարցի բննարկմանը:

Այլընտրանքներից մեկը կարող է լինել արաբական միջպետական գլխավոր կազմակերպության՝ Արաբական պետությունների լիգայի(ԱՊԼ) ուժեղացումը: Իսկ դա պահանջում է նրա գործողության ակտիվացում, որը կապված է բուն այդ կազմակերպությունը, նրա կառուցվածքը, հիմնադրույթները վերանայելու և արդիականացնելու հետ:

Երկրորդ այլընտրանքը ՄՄԱՆ-ին, որը քննության է ենթարկվել ստենախոսությունում, դա Եվրո-Միջերկրական գործընկերության հետ սերտ համագործակցությունն է: Այդ համագործակցությունը կարող է լինել ինչպես կապերի ակտիվացման, այնպես էլ այլանի ձևով: Այդ գործընկերությունն իր շարքերում միավորում է Միջերկրականից արևելք և արևմուտք գտնվող 27 պետություն, որոնք գործընկերություն են հաստատել մի շարք արաբական պետությունների հետ, ինչպես Եգիպտոսը, Մարոկկոն, Ալժիրը, Թունիսը, Լիբանանը, Հորդանանը, անգամ Պաղեստինյան Ինքնավարությունը:

Արաբների համար Եվրո-Միջերկրական գործընկերությունը նախընտրելի է Մեծ Մերձավոր Արևելքից, քանի որ դա ընկալվում է որպես հարաբերությունների բնական ընդլայնում Միջերկրական ծովի արևելյան և արևմտյան հատվածների միջև: Կա նաև մի կարևոր հանգամանք՝ Եվրո-Միջերկրական գործընկերությունը չի սպառնում արաբների ինքնությանը և չի ձգտում արաբական և իսլամական արժեքները փոխարինել եվրոպականով:

Որպես երրորդ այլընտրանք Մեծ Մերձավոր Արևելքին առաջարկվում է հարաբերությունների ուժեղացումը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, որոնց արաբական երկրները կարող են սկզբում միանալ նույնիսկ դիտորդի կարգավիճակով: Ատենախոսությունում քննարկվում են արաբական երկրների

հարաբերությունների հնարավոր զարգացումը, խորացումը և ամրապնդումը Տնտեսական Համագործակցության կազմակերպության (ECO), Իսլամական կոնֆերանս կազմակերպության, Հարավ-արևելյան Ասիայի ասոցիացիայի (ASEAN) հետ և այլն:

Սակայն այդ բոլորը դեռևս գտնվում է զարգացման նախնական փուլում և քիչ ժամանակ ու ջանքեր չի պահանջվի, մինչև որ այլընտրանքային այդ տարբերակները կյանքի կոչվեն:

Երրորդ գլխի Երրորդ ենթաբաժնում՝ *Մարտահրավերներ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծին մոտ ապագայում*”, կենտրոնական հարցերից է այն գործոնների բացահայտումը, որոնք աշխատում են հոգուտ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագծի մերժմանը: Այդ խոչընդոտները բազմազան են, բայց դրանց մեջ, ինչպես ի հայտ եկավ այդ հարցի ուսումնասիրություն ընթացքում, առաջնային դերակատարում ունեն քաղաքական-ազանական, կրոնական, մտավոր և մշակութային գործոնները:

Քննարկման առարկա հանդիսացող տարածաշրջանը հայտնի է որպես կոնֆլիկտների և պատերազմների տարածաշրջան: Այդ հանգամանքը ստիպում է արաբներին զգույշ լինել և նրանք մտավախություն ունեն, որ Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծը կարող է գործիք դառնալ ԱՄՆ-ի և Իսրայելի ձեռքում արաբներին զանազան արկածախնդրությունների մեջ ներգրավելու համար:

Որպես խոչընդոտ ՄՄԱՆ-ի ճանապարհին, շատ լուրջ և ազդեցիկ գործոն է կրոնական գործոնը: Մեծ Մերձավոր Արևելքի ծրագիրը չի կարող շրջանցել այդ գործոնը, քանի որ նա հավասարության մշան է դնում ահաբեկչության և իսլամի միջև, փորձում փոքրացնել և նսեմացնել իսլամի դերն ու մշամակությունը տարածաշրջանում: Իսկ դրա հետ իսլամը, նրա սպասարկողները և հետևորդները ոչ մի կերպ չեն կարող համաձայնվել և ամեն ինչ կանեն այդ նախագիծը ձախողելու համար: Ատենախոսության մեջ քննարկվում են նաև մտավոր-ինտելեկտուալ և մշակութային գործոնների դերը ՄՄԱՆ-ի առաքելությունը ձախողության մատնելու գործում:

Այս ենթաբաժնի առանցքային հարցերից է ընդհանրապես Մերձավոր Արևելքի հեռանկարի հարցը: Ատենախոսության մեջ քննարկվում է այն հարցը, թե ինչպիսին է լինելու այդ տարածաշրջանի ոչ հեռավոր ապագան: Դրա պատասխանը պահանջում էր համապատասխան մեթոդորոգիայի մշակում: Նախապատվությունը տրվեց այդ հարցի ուսումնասիրության այն տարբերակին, որը խարսխված է երեք հիմնասյուների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Իսրայելի և Մերձավոր Արևելյան տարածաշրջանի վրա:

Ամհնար է խոսել Մերձավոր Արևելքի ապագայի մասին առանց խոսելու ԱՄՆ-ի քաղաքականության մասին: ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում առաջիկա տասնամյակներում հիմնված կլինի ահաբեկչության դեմ առճակատման



ստրատեգիայի վրա: ԱՄՆ-ի քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը կարող է դառնալ Չինաստանի և Ռուսաստանի ազդեցության սահմանափակումը Մերձավոր Արևելքում: Մեծ Մերձավոր Արևելքը կմնա ԱՄՆ-ի քաղաքականության կիզակետում՝ որպես ամերիկյան հեգեմոնիան աշխարհի վրա պահպանելու և մեծացնելու մի կարևոր միջոց:

Իսրայելի ստրատեգիան կհետապնդի մի բանի նպատակներ, այդ թվում տարածաշրջանի ռեսուրսների վրա տիրապետության հաստատումը շնորհիվ հրեական կապիտալի և առաջադիմական տեխնոլոգիայի: Ամենայն հավանականությամբ նա կհաջողի դառնալ տնտեսապես մեծ տերություն տարածաշրջանում և թափանցել արաբական շուկա: Նա կգարգացնի իր ռազմական հարաբերությունները Թուրքիայի հետ: Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ-ի հետ հարաբերություններին, ապա Իսրայելի հարաբերությունները նրա հետ կմնան բարձր մակարդակի վրա: Հեռանկարում Իսրայելը կդառնա Մեծ Մերձավոր Արևելքի գլխավոր դերակատարներից մեկը:

Ինչ վերաբերում է Մերձավոր Արևելքի տարածաշրջանին, ապա այստեղ դեռ երկար ժամանակ կպահպանվի լարվածությունը, կլինեն ճգնաժամեր՝ կապված ջրի, էներգիայի և մարդագրական երևույթների հետ, չեն բացառվում ռեգիոնալ կոնֆլիկտները: Մեծ Մերձավոր Արևելքի շատ պետություններ կտրոհվեն մանր պետությունների: ՄԱԿ-ի երկրների մեծ մասը չի կարողանա հասնել տնտեսական նկատելի զարգացման և կշարունակի տառապել գլոբալիզացիայի մարտահրավերներից:

Միաժամանակ ապագան ակնատես կլինի իսլամական շարժումների ակտիվացմանը և ազդեցության աճին այն բանի պատճառով, որ Մեծ Մերձավոր Արևելքի և նրա սահմաններից դուրս գտնվող մյուս իսլամական երկրների իշխանությունները չեն կարողանա բավարարել ժողովրդի պահանջները, ցանկությունները և ձգտումները:

Արաբների համար, բացի վերոնշյալ հանգամանքներից, անհրաժեշտ կլինի կատարել մի շարք քայլեր, որոնք կարող են օգնել պահպանելու նրա կառուցվածքները, մեծացնել նրանց ակտիվությունը, և արաբական այլընտրանքը դարձնել գերակա տարածաշրջանում:

Իրանը հավանաբար կդառնա տարածաշրջանային մեծ պետություն և կարևոր դեր կխաղա տարածաշրջանում, հատկապես ձեռք բերելով միջուկային տեխնոլոգիաներ:

Չպետք է բացառել նաև ռեֆորմների գործընթացի ակտիվացումը Մեծ Մերձավոր Արևելքում:

ՎԵՐՋԱԲԱՄՆՈՒՄ, ատենախոսության հիմնահարցերի ուսումնասիրության և արանց վերլուծության արդյունքում, ատենախոսը հանգել է հետևյալ զրակացություններին.

1. Մեծ Մերձավոր Արևելքի Նախագիծն ընդգրկում է տարբեր քաղաքակրթական, քաղաքական, տնտեսական և մշակութային չափանիշներ ունեցող երկրներ՝ միմյանցից տարբեր ազգություններով և մշակույթով, որոնց միավորողը իսլամական բնորոշիչն է: ԱՄՆ-ը դրան տեղյակ լինելով հանդերձ, փորձում է Մեծ Մերձավոր Արևելքը ծառայեցնել իր աշխարհաքաղաքական նպատակների համար՝ իսլամն առճակատման մեջ դնելով արևմտյան քաղաքակրթության հետ:

2. Այդ նախագիծը դրսից պարտադրված է տարածաշրջանի ոչ միայն ժողովուրդների, այլև նրանց առաջնորդների կամքին հակառակ, ներառյալ նրանց, ովքեր համարվում էին Վաշինգտոնի մերձավոր բարեկամները:

3. ԱՄՆ-ը նախագիծը կառուցել է երկու սյուների վրա՝ փոփոխության և վերահսկողության: Ամերիկյան այդ ստրատեգիան մեկնում է այն մտայնությունից, որ նա ունի լուսավորչական առաքելություն՝ արթնացնել տարածաշրջանի երկրները՝ նրանց պետական կառուցվածքի մեջ հիմնարար փոփոխություններ իրագործելու և այդ երկրներին ամերիկյան լիբերալ կենսաձևը պարտադրելու միջոցով, միաժամանակ դուրս նետելով դրանցից արաբական բնորոշիչները:

4. Ամերիկյան ստրատեգիան և շրջանառության մեջ գտնվող ծայրահեղական տեսադրույթները նպատակ ունեն տարածաշրջանի ժողովուրդներին պարտադրել ամերիկյան արժեքները և հաստատել ամերիկյան հեգեմոնիան, որը սպառնալիք է արաբների և իսլամական ժողովուրդների ինքնությանը և պատմական-մշակութային արժեքներին: Նախագիծն այդ արժեքները դարձնում է լուսանցքային: Մեծ Մերձավոր Արևելքի նախագծի գնահատմանը պետք է մոտենալ այդ համատեքստում:

5. Մեծ Մերձավոր Արևելքի ամերիկյան նախագիծը ելնում է այն ենթադրությունից, որ այդ ռեգիոնում քաղաքական ռեֆորմների, ժողովրդավարության և տնտեսական զարգացման բացակայությունը պատասխանատու է ահաբեկչության առաջացման համար, որը վտանգ է ներկայացնում Միացյալ Նահանգների ազգային անվտանգությանը: Ահաբեկչության ամերիկյան բնորոշումը սահմանափակվում է նրանում արաբներին և մուսուլմաններին ներառելով միայն՝ անտեսելով, սակայն, իսրայելական ահաբեկչությունն արաբների դեմ:

6. Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը ուշադրություն չի դարձնում արաբական աշխարհի շահերի և գերակայությունների վրա: Դա արաբական աշխարհի վրա ամերիկյան խնամակալություն հաստատելու փորձ է, առանց որևէ միջազգային կազմակերպության լիազորության:

7. Մեծ Մերձավոր Արևելքի նախագիծը կարող է տանել միայն դեպի քաոս և անկայունություն: Հետևաբար դրան պետք է հակադրել համապատասխան արաբական-իսլամական ստրատեգիա՝ հիմնված հետևյալ գաղափարների վրա՝ մերժել օտար



հեզմունիան և միջամտությունը տարածաշրջանի ներքին գործերին, և մշակել արաբական վերածննդի նախագիծ:

9. Պետք է ընդունել, որ արաբներին չհաջողվեց ժամանակին մշակել քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային վերափոխումների իրենց սեփական ծրագիրը՝ խարսխված արաբական սեփական արժեքների և արդիական խնդիրների համադրման վրա: Այդ պատճառով արաբական աշխարհին չհաջողվեց դիմագրավել Մեծ Մերձավոր Արևելքի ամերիկյան նախագիծը:

10. Ամերիկյան նախագծի մերժումը արաբներին չի ազատում ռեֆորմների իրականացման պատմական անհրաժեշտությունից: Դա են պահանջում արաբական վերածննդի շահերը

11. Արաբական երկրների արդիականացման, զարգացման, ժողովրդավարացման խնդիրները կախված են նաև արաբ-խորայելական կոնֆլիկտի լուծման շրջանակներում տարածաշրջանում խաղաղության հաստատումից, պաղեստինյան պետության ստեղծումից և Արևմուտքում իսլամի նկատմամբ անվստահության հրաժարումից:

Այս նոր և վերին աստճանի բարդ խնդրի ուսումնասիրությունը, արաբական երկրներում ստեղծված քաղաքական և հասարակական մթնոլորտի, արաբների զգացմունքների և տրամադրությունների անալիզը մեզ քույլ է տալիս եզրակացնել, որ արաբական Վերածննդի նախագիծը պետք է լինի արաբական իր էությունը, ոգով, ներկայացմամբ և իրագործումով:

1. The Arab Attitude Towards the Greater Middle East, Damascus, 2006, 47 p. (Նույնը հրատարակվել է նաև արաբերեն լեզվով):
2. The Reason of Imposing the Greater Middle East Project, Damascus, 2006, 60 p. (Նույնը հրատարակվել է նաև արաբերեն լեզվով):
3. The Factors of Refusing the Greater Middle East Project, Damascus, 2007, 42 p. (Նույնը հրատարակվել է նաև արաբերեն լեզվով):



АХМАД АБДЕЛКАДИР ДЖАРУШЕ  
ПРОЕКТ БОЛЬШОГО БЛИЖНЕГО ВОСТОКА И ПОЗИЦИЯ АРАБОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности

7.00.02- "Всемирная история"

Защита состоится 15 ноября 2007г. в 14.00 часов на заседании специализированного совета 006, по адресу: 375019, Ереван, проспект Маршала Баграмяна 24 г., Институт востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Выдвижение в 2004г. президентом США Дж. Бушем Проекта Большого Ближнего Востока буквально потрясло весь мир. Эта была попытка под маской политических, социальных, экономических и культурных реформ реорганизовать указанный огромный регион на основе западных ценностей. Это, естественно, вызвало отрицательную реакцию в арабских странах и во всем мусульманском мире. Изучение этой темы представляет большое актуальное научное и политическое значение, тем более, что данное исследование является первой попыткой по комплексному изучению указанной темы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии.

**В Введении** обосновывается актуальность темы, ее научное и политическое значение, определены научная новизна, главные цели и задачи, практическое значение данного исследования, дается обзор источников, официальных документов и материалов, а также литературы, использованных в работе.

**В первой главе**- "Международные изменения в конце XX- начале XXI веков и их воздействие на арабский регион", рассматриваются возникновение новой ситуации и расстановка сил после завершения холодной войны, распада Советского Союза и образования однополярного мира во главе США. и ее претензии на лидерство мира. В новой американской стратегии большое значение придавалось арабскому и мусульманскому миру и установлению американской гегемонии в этом огромном пространстве. В поисках новых путей и методов для реализации своей новой стратегии, президент США Буш инициировал проект Большого Ближнего Востока, включив в этот новый термин все арабские страны, Иран, Турция, Израиль, Афганистан и Пакистан, т.е. территории, простирающиеся от Марокко и Мавритании до Центральной Азии. Американский проект явился новым и опасным вызовом для арабского мира, тем более,

что, делались попытки обвинить арабов и ислам в терроризме, в опасном источнике терроризма. Все это коренным образом изменило геополитическую ситуацию в арабском регионе, поставив арабские страны перед решением новых и трудных задач

**Во второй главе**- "Проект Большого Ближнего Востока, его основания, причины, навязывание и реакция на него", обсуждаются основные ключевые вопросы диссертационной темы. Детально анализируются основные положения этого важного документа, в том числе трансформация американской стратегии, декларированные и недеklarированные причины выдвижения проекта, попытки использовать Соединенными Штатами необходимых политических, экономических, социальных и культурных преобразований для своих интересов, установления американской гегемонии, усиления своего влияния, установления американского контроля над нефтью и другими природными богатствами арабских стран. Одной из важных целей проекта было достижение эррозии и ликвидации арабской идентичности и ее замена западными ценностями. В этой главе показано широкое движение протеста и недовольства арабских и мусульманских масс американским проектом, их негативное отношение к нему и требование отклонить предложение американского президента, считая его опасным и неприемлемым для них, направленным против арабской идентичности, вековых исторических, этнических, арабских и мусульманских корней. Подробно освещается позиция арабских стран, а также Ирана, Турции и Израиля, ЕС и НАТО к проекту.

В диссертации одновременно подвергнута критике беспечность арабских руководителей в вопросе проведения необходимых и назревших реформ в своих странах, несостоятельность арабской политической мысли разработать и представить достойный проект для реформирования арабского мира. Вследствие этого, отмечается в диссертации, политическое поле оставалось свободным, чем и воспользовалась Америка, навязав свой проект.

**В третьей главе**- "Практические шаги по выполнению Проекта Большого Ближнего Востока и вызовы ему в ближайшем будущем", отмечается, что этот проект, вольно или невольно оказывал определенное влияние на арабскую действительность и имел политическое, экономическое, социально-культурное воздействие, и были осуществлены какие-то реформы в арабских странах. Одновременно рассмотрены политические, военные, религиозные, интеллектуальные и культурные факторы как вызовы к американскому проекту, а также альтернативы ему.

**В Заключении** обобщены итоги исследования и представлены выводы, сделанные автором в ходе изучения темы.



AHMAD JAROUSHEH  
THE GREATER MIDDLE EAST PROJECT  
AND THE ARABS ATTITUDE

*Ahmad*